նկատեսցես փարթամութեան առնու։ Դարձեալ զկնի սակաւ ամաց անցելոց ի վերայ այսր ամենայնի Հուսէյին անուն ոմն խան Շամախու՝ կրկին ըմբռնեաց զսոսա երկոսին եղբարսն Հրամանաւ շահին և զլխատեաց, և ապա ի ձեռն առեալ զերեսին որդիս նոցա՝ զոր Փէյքար, Իբրահիմ, և Ղասում ասէին, և յոյժ չարչարանօք և խոշտանկանօք ետ հանել և զմնացորդս ընչիցն, զոր ասէին ԻԵՌ թուման. այսքան եւս այժմս առին և թողին զնոսա։

Ապա Փէյքար անուանեալն գնաց առ շահն և առեալ զմէլիքութիւն եկն ի տեղի իւր, և վարէր ըստ հայրենի սովորութեան, որ և զկնի չորից ամաց միւս եւս Հիւսէին անուն խան Շամախու ետ գլխատել զՓէյքարն ի տան իւրում, և ապա զտունն, զկանայս և զորդիս և զամենայն ինչսն իբրեւ ի գերութիւն վարեալ ածեն ի Շամախի. զկնի որոյ զննեալ և որոնեալ զամենայն զոր ինչ և ունէր, զայն եւս առին և արարին արքունիս, որ և զհամար ընչից սորին եւս ասացին գոլ աւելի քան ԻՌ թուման, բայց եղբարք սորին Իբրահիմն և Ղասումն փախստեայ գնացին առ Ալի սուլտանն վերոյիշեալ, և անտի անցին յայն կողմն լերինն՝ առ մեծամեծսն ազգացն այնոցիկ Լազկեաց. զի որպէս ասեն երկու կրօնս ունել մահմէտականաց՝ ոմանք շիայք կոչին՝ որ են պարսիկք և զզբլպաշք, և ոմանք սունիք ասեն՝ որ են Օսմանցիք. և այս լեռնականք, և Ազուան ազգն Ղանտահարու, և Օզպէկք, և Պուխարացիք, և Արաբացիք, և այլ յոլովք որք ընդ տիեզերական կրօնիւք այս և վասն այն գնացին սոքա առ Լազկիսն, վասն զի ընդ նոսա միակրօնք էին, և ասեն թէ բոկոտն, և բացագլուխ շրջեցան ի դրունս նոցա վասն նախատանաց իւրեանց, զոր կրեցին ի ձեռաց շիայիցն. քանզի այսպէս է սովորութիւն տեղւոյն։ Եւ այսպէս շրջելն նոցա ի նախանձ դրդեաց զնոսա, և չարացան քան զգազան կատաղի, և յոյժ ամօթ համարեցան ինքեանց այնպէս լինելն նոցա, և ձայն տուեալ միմեանց միաբանեցան և խրախուսեալ ժողովեցան ի մի վայր բիւրք բիւրուց, և հազարք հազարաց, քանզի միշտ լսէին ասպատակ յայսմ կողման եղելոց Լազկեացն, զոր նախ յիշեցաք, և նոքա եւս խորհեալ էին զալ և խառնիլ ի սոսա, որպէս և անցեալ ամին Սուրխայ անուն գլխաւոր նոցա եկն մինչեւ ի Վրացտուն, անցեալ ի